«Վ-ԳԱՀ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ՝ Հ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

hovhannesvardan.yan8888@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

27.12.2024թ կնքված թիվ ԵԳՀՄ-ԳՀԾՁԲ-25/1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՍԱՀՔԻ և ՀՈԿԵՅԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Վ-ԳԱՀ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 27.12.2024թ կնքված թիվ ԵԳՀՄ-ԳՀԾՁԲ-25/1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է անվտանգության ապահովման ծառայությունների (պահնորդային ծառայություններ) մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) պայամանգրի 2.4.2. կետի պահանջների չկատարումը,

գ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ՝ պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը չի կարող ապահովել անհրաժեշտ քանակի պահնորդներ և կատարել ծառայությունների պատշաճ և որակով մատուցումը,ինչպես նաև վերոնշյալ ծառայությունների մատուցումը Ընկերության կողմից կարող է իրականացվել մինչև սույն թվականի մայիսի 30-ը ներառյալ՝ Պատվիրատուն ղեկավարվելով վերոնշյալ իրական հիմքերով՝ միակողմանի (ամբողջությամբ) լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման գումարը (Նշված գումարը անհրաժեշտ է վճարել Պատվիրատուի գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնի բնօրինակները ներկայացնել Պատվիրատուին), ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա Պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

«ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՍԱՀՔԻ և ՀՈԿԵՅԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԺԿ՝ **Ա. ԳԱԼՍՏՅԱՆ**

02.06.2025թ.